

Համաձայն Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 65-Ն հրամանի՝ որպես աշխատանքի կազմակերպման պահանջ սահմանվել է աշխատողների կողմից իրենց գործատուներին յուրաքանչյուր 14 օրը մեկ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 10-ի թիվ 2688-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատի ներկայացումը, բացառությամբ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատակիցների և հղիների: Պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտությունն (այսուհետ՝ ՊՇՌ) իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին: